

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 7

Արցախի պետական համալսարանի խորհրդի՝ 2022թ. փետրվարի 15-ի N 7 նիստի

Նիստին ներկա էին խորհրդի 28 անդամներից 20-ը:
Հրավիրված էին ԱՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարը,
ԱրՊՀ պրոռեկտորները:

Նախագահությամբ՝ ԱրՊՀ տնտեսագիտության և կառավարման ամբիոնի
վարիչ, խորհրդի՝ տարիքով ավագ անդամ Իրինա Հովիկի
Իշխանյանի

Քարտուղարությամբ՝ Լուսինե Գեորգիի Մարգարյանի

ՕՐԱԿԱՐԳ

1. Արցախի պետական համալսարանի խորհրդի նախագահի ընտրության հարցը
/Ձեկուցող՝ խորհրդի տարիքով ավագ անդամ/
2. Արցախի պետական համալսարանի 2020-2021 ուսումնական տարում կատարած
աշխատանքների մասին
/Ձեկուցող՝ ռեկտոր Ա. Յու. Մարգարյան/
3. Արցախի պետական համալսարանի 2021 ֆինանսական տարվա արդյունքների
մասին
/Ձեկուցող՝ ԱրՊՀ հաշվապահական հաշվառման բաժնի պետ Ն.Գրիգորյան /
4. Արցախի պետական համալսարանի 2022թ. ծախսերի նախահաշիվը հաստատելու
մասին
/Ձեկուցող՝ ԱրՊՀ հաշվապահական հաշվառման բաժնի պետ Ն.Գրիգորյան /
5. Այլ հարցեր

1. Լսեցին՝

Արցախի պետական համալսարանի խորհրդի նախագահի ընտրության հարցը:

Խորհրդի քարտուղարը ծանուցեց նիստի անդամների մասնակցության կազմի
մասին, ապա հայտնեց, որ, ըստ ԱրՊՀ խորհրդի հաստատված աշխատակարգի,
նիստը պիտի նախագահի խորհրդի անդամներից տարիքով ավագը:

Խորհրդի նիստը վարելու հրավիրվեց խորհրդի ավագ անդամ, ԱրՊՀ
տնտեսագիտության և կառավարման ամբիոնի դոցենտ Իրինա Հովիկի Իշխանյանը:

ա/ Նախագահությունը ստանձնած Ի. Իշխանյանը հայտարարեց քվեակազմի
առկայությունը և քվեարկության դրեց օրակարգը:

բ/ Նիստը նախագահող Ի. Իշխանյանն առաջարկեց խորհրդի անդամներին հանդես գալ նախագահի թեկնածության առաջադրմամբ, ապա և քվեարկությամբ:

Նա նշեց, որ խորհրդի նախագահի պաշտոնը թափուր է մնացել՝ նախկին նախագահ Գրիգորի Մարտիրոսյանի լիազորությունների՝ հարգելի պատճառով դադարեցմամբ պայմանավորված, և պետք է խորհուրդը ընտրի նոր նախագահ: Նաև ծանուցեց, որ խորհրդի նախագահ չի կարող լինել նույն բուհում հաստիքային աշխատողը կամ սովորողը: Առաջարկեց թեկնածու/ներ/ առաջադրել, ապա և քվեարկության կարգը որոշել: Ըստ ԱրՊՀ աշխատակարգի՝ խորհրդի որոշումները բաց քվեարկությամբ են իրականացվում, բայց խորհուրդը նաև իրավասու է որոշելու փակ քվեարկության անցկացման մասին:

1. Արտահայտվեց՝

ա/ԱրՊՀ տնտեսագիտության ֆակուլտետի դեկան Ռուզաննա Յակովի Մանգասարյանը՝ առաջարկելով ԱՀ պետական նախարար Արտակ Արսյումի Բեգլարյանի՝ որպես խորհրդի նախագահի թեկնածությունը:

Իրականացվեց բաց քվեարկություն: 19 կողմ արդյունքներով Ա.Բեգլարյանն ընտրվեց խորհրդի նախագահ:

1. Որոշեցին՝

ա/Հաստատել խորհրդի նիստի օրակարգը:

բ/Հիմք ընդունելով քվեարկության արդյունքները՝ հաստատել Ա.Ա. Բեգլարյանի՝ որպես խորհրդի նախագահի ընտրության փաստը:

2. Լսեցին՝

Արցախի պետական համալսարանի ռեկտորի 2020-2021 ուսումնական տարում կատարած աշխատանքների մասին հաշվետվությունը, որը ներկայացրեց ԱրՊՀ ռեկտոր Ա. Յու. Սարգսյանը:

Ըստ համալսարանի գործունեության կազմակերպման բաղադրիչների՝ ԱրՊՀ ռեկտոր Ա. Յու. Սարգսյանը մանրամասն ներկայացրեց 2020-2021 ուսումնական տարում կատարած աշխատանքը: *Հաշվետվությունը կցվում է. առդիր 10 էջ/:*

Հաշվետվությունն ամփոփվեց համալսարանի մեկամյա գործունեությունը ներկայացնող սահիկով:

Ռեկտորի տեղեկատվությունից հետո նիստը նախագահողը հայտարարեց հարցերի և էլույթների հերթագրում:

Հարցի համար հերթագրվեցին՝

1. Գուրգեն Գառնիկի Ներսիսյանը/1 հարց/

2. Արտակ Արսյումի Բեգլարյանը/5 հարց և 1 առաջարկ/

Ելույթի համար հերթագրվեցին՝

1. Շահեն Վարդանի Ադիսյանը

2. Ռուզաննա Յակովի Մանգասարյանը

3. Լիլիթ Սուրենի Մարգարյանը

4. Լուսինե Գեորգիի Մարգարյանը

Ըստ հերթագրման՝ ռեկտորին հարց տալու հնարավորություն տրվեց:

Հարց 1-ին. Ըստ տրված տեղեկության՝ կան ուսանողներ, ովքեր, ազատվելով ուսանողության շարքերից, օրենսդրության կոպտագույն խախտմամբ իրենց ուսումը շարունակում են Արցախի այլ բուհերում: Գ. Ներսիսյանը հետաքրքրվեց՝ ԱրՊՀ-ից հեռացված այդ ուսանողների մասին տեղեկությունները պահպանվո՞ւմ են, հնարավո՞ր է դրանք ստանալ և բացահայտել օրենսդրական խախտումները:

Պատասխան 1-ին. – Ա. Մարգարյանը հայտնեց, որ այդ տվյալներն առկա են ու դրանց մասին համապարփակ տեղեկություններ հղվում են նաև լիազոր մարմին: Ըստ պահանջի՝ դրանք կարող են կրկին ներկայացվել:

Հարց 2-րդ. – Ա. Բեգլարյանը բակալավրիատի և մագիստրատուրայի կրթական ծրագրերի միջև առկա տարբերությունները պարզաբանելու հարց հղեց:

Պատասխան 2-րդ.– Ա. Մարգարյանը նշեց, որ մագիստրոսական կրթական ծրագրերը էապես տարբերվում են բակալավրիատի կրթական ծրագրերից և կրկնություն չեն, դրանք մասնագիտացված առանձնացված ուղղություններ են, որոնք բակալավրիատում համալիր և ընդհանրական ձևով են ուսումնասիրվում:

Հարց 3-րդ.– Ա. Բեգլարյանը հետաքրքրվեց՝ կա՞ կարիք բակալավրիատի և մագիստրատուրայի կրթական ծրագրերի վերանայման:

Պատասխան 3-րդ.– Ա. Մարգարյանը նշեց, որ միանշանակ է վերանայման անհրաժեշտությունը: Բակալավրիատի և մագիստրատուրայի մի շարք մասնագիտությունների գծով արդեն իսկ վերանայվել են կրթական ծրագրերը, միավորվել են մասնագիտություններ ու մասնագիտացումներ, բայց դրանք իրականացվել են ներհամալսարանական հնարավորություններով: Բացի այդ՝ շատ կարևոր են այնպիսի նոր կրթական ծրագրերի ներդրումը, ինչպիսիք են՝ *Տեղեկատվական տեխնոլոգիաների մասնագիտացված ուղղությունների ներդրումը, Տվյալագիտությունը, ԱԹՄ-ների արտադրության հետ կապված խնդիրներն ուսուցանող կրթական ծրագրերը, Կովկասագիտությունը*, և դրանք իրականացնելու համար անհրաժեշտ է պետական աջակցություն:

Հարց 4-րդ.– Ի՞նչ էք ակնկալում կառավարությունից, ի՞նչ ուժի կարիք կա, Ձեր պատկերացմամբ ի՞նչ պետք է անի կառավարությունը:

Պատասխան 4-րդ.– Ա. Մարգարյանը նշեց, որ ամենակարևոր սպասելիքն այն է, որ օրենսդրությամբ սահմանված պայմաններն ապահովվեն, եթե օրենսդրությամբ սահմանված դրույթները կոպտերեն չխախտվեն, և ըստ էության չլինի հավատարմագրված ու չհավատարմագրված բուհի նույնականացում, ապա խնդիրները մեծ մասամբ կլուծվեն: Բացի այդ՝ ռեկտորն առաջարկեց մրցակցային առողջ դաշտ ստեղծել, որի նախադրյալներն օրենսդրությամբ ապահովված են:

Հարց 5-րդ.– Ա. Բեգլարյանը առաջարկ- հարց հղեց առ այն, որ կարող են վերանայել կրթական ծրագրերում հատկացվող տեղերի քանակը և սահմանել որոշակի շեմ:

Պատասխան 5-րդ.- Ա. Սարգսյանը նշեց, որ դրանք իրականացվում են գործող կարգի համաձայն և իր կողմից առաջարկեց հետևողականորեն իրականացնել մասնագիտությունների լիցենզավորման կարգը, որով սահմանված հստակ պահանջները կատարելու դեպքում էականորեն կբարձրանա մատուցվող կրթական ծառայությունների որակը:

Հարց 6-րդ.- Ա. Բեգլարյանը հետաքրքրվեց միջազգային հանդեսներում տպագրված հոդվածների թվով, ի՞նչ խնդիրներ կան այս տարածքում և որո՞նք են բարելավման ուղիները, պատկերացումները:

Պատասխան 6-րդ.-Ա. Սարգսյանը նշեց, որ տպագրված հոդվածների թիվը 3 է, բայց այսօր արդեն կան բոլոր նախադրյալները միջազգային հանդեսներում նաև անվճար հիմունքով տպագրվելու: Հիմնական խնդիրը լեզվական գործոնն է, օտար լեզվով գիտական հաղորդակցության մակարդակի բարձրացման խնդիր կա, և պրոֆեսորադասախոսական համակարգի այդ հմտությունները զարգացնելուն կնպաստի նաև օտար լեզուների ուսուցման կենտրոնը, որի հիմնադրումը բուհի առաջնային գործողություններից է:

Առաջարկ 1. -Ա. Բեգլարյանն առաջարկեց մինչև փետրվարի 27-ը ներկայացնել *Արցախում բարձրագույն կրթության կազմակերպման տեսլականը* առաջարկությունների փաթեթ:

Ըստ հերթագրման՝ ելույթի հնարավորություն տրվեց:

Ելույթ 1-ին. _Շ. Այդինյանը արդյունավետ գնահատեց կատարված աշխատանքը՝ կարևորելով բուհում ներդրված բաց ու թափանցիկ հաշվետվողական համակարգի առկայությունը, ինչն ապահովում է բոլոր ստորաբաժանումների կատարած աշխատանքի իրական գնահատումը: Նա նշեց նաև, որ բուհ-հասարակություն-տնտեսություն համագործակցության գործող շրջանակներն ընդլայնելը դեռևս օրախնդիր է, և առկա մակարդակը բավարար չէ մատուցվող կրթական ծառայությունները երկրի կարիքներին համապատասխանեցնելու պահանջն իրագործելու համար: Խնդիրն առավել խորացել է հետպատերազմական շրջանում:

Շ. Այդինյանն առաջարկեց Արցախի պետական համալսարանի ռեկտորի 2020-2021 ուսումնական տարում կատարած աշխատանքը գնահատել *բավարար*:

Ելույթ 2-րդ. _Ռ. Մանգասարյանը ողջունեց ու գնահատեց կատարված աշխատանքը, կարևորեց հատկապես հետպատերազմական շրջանում ուսումնական գործընթացում իրականացված աշխատանքները: Հատկանշեց, որ արտասովոր պայմաններում բուհն արագ ինքնակազմակերպվել է, արվել է առավելագույնը հնարավորությունների սահմանում, բարելավվել են փորձուսուցման իրականացման աշխատանքները, գործատու-բուհ համագործակցության առումով որոշակի քայլեր են ձեռնարկվել, և այդ ուղղությամբ իրականացվող աշխատանքներին հետամուտ են:

Իբրև նկատառումներ՝ նշեց ա/ դասախոսական կազմի՝ արտերկրում վերապատրաստման խնդիրը, բ/ գիտահետազոտությամբ զբաղվելու խնդիրը՝ խրախուսման համակարգի ներդրմամբ: Այդ խնդիրները բարձրաձայնվել էին նաև

անցյալ տարվա հաշվետվության ժամանակ, բայց օբյեկտիվ պատճառներով այդ ուղղությամբ իրականացված աշխատանքները դեռևս բավարար չեն:

Ռ. Մանգասարյանն առաջարկեց Արցախի պետական համալսարանի ռեկտորի 2020-2021 ուսումնական տարում կատարած աշխատանքը գնահատել *բավարար*:

Ելույթ 3-րդ.-ԱրՊՀ մագիստրանտ Լիլիթ Մարգարյանը նույնպես բարձր գնահատեց 2020-2021 ուս. տարում կատարած աշխատանքը: Առանձնապես կարևորեց դեկավարության կողմից հետպատերազմական շրջանում իրականացրած գործողությունները, կազմակերպված դասընթացները՝ հոգեբան խաղաղապահների կողմից, որոնք զգալիորեն աջակցել են են թե՛ ուսանողության, թե՛ դասախոսական համակազմի բարոյահոգեբանական պատրաստությանը: Ծանր շրջանում հնարավոր եղավ ուսումնական գործընթացը բնականոն հուն վերադարձնել և երկրորդ կիսամյակից համակարգայնորեն վերականգնված ուսուցում կազմակերպել: Հատկանշեց իրականացվող ուսանողամետ ու ուսանողակենտրոն քաղաքականությունը, արժևորեց իրականացված բարոյահոգեբանական վերականգնողական միջոցառումները:

Լիլիթ Մարգարյանն առաջարկեց Արցախի պետական համալսարանի ռեկտորի 2020-2021 ուսումնական տարում կատարած աշխատանքը գնահատել *բավարար*:

Ելույթ 4-րդ.- Լ.Մարգարյանը հաշվետու տարին շրջադարձային գնահատեց՝ նշելով, որ այն անկումային էր՝ արտահամալսարանական իրականության բնութագրով, և վերելքային՝ համալսարանական աշխատանքների գնահատման բարձր նիշով՝ հավատարմագրումը պատվով իրականացնելու հանգամանքով պայմանավորված: Նա կարևորեց, որ 2020-2021 ուսումնական տարվա մեկնարկը հատկանշվել է Ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացի փուլերի ամփոփման և հավատարմագրմանը ներկայանալու նախապատրաստական բուռն աշխատանքներով: Ներդրվել էր էլեկտրոնային Classroom հարթակը, մշակվել և ընդունվել էր հեռավար ուսուցմամբ ուսումնական գործընթացը կազմակերպելու կարգը: Ողջ համակազմը վերապատրաստված էր էլեկտրոնային հարթակով աշխատանքների կազմակերպումն իրականացնելու համար: Ու պատերազմն ընդհատեց ուսումնական գործընթացը: Եվ ինչպես Արցախյան առաջին պատերազմի օրերին ԱրՊՀ-ն իր առաքելությանը հավատարիմ մնաց ու եղավ համախմբող կառույց, ճկուն և խելամիտ կառավարման արդյունքում արագ ինքնակազմակերպվեց, և իր ուսանողությանը ներկայացավ իր առաքելության իրականացմանը հաստատ մնալու կամքով, անհաղթահարելին հաղթահարվեց, ինստիտուցիոնալ հավատարմագրումը բուռն ստացավ: Իսկ հավատարմագրումը կարևորագույն փաստ է ու ԱրՊՀ զարգացման հեռանկարում՝ նշանակալի երևույթ:

Բուհի կենսագրության մեջ հաշվետու տարին իսկապես գնահատելի էջ որակեց Լ. Մարգարյանը և առաջարկեց Արցախի պետական համալսարանի ռեկտորի 2020-2021 ուսումնական տարում կատարած աշխատանքը գնահատել *բավարար*:

Ամփոփելով և հիմք ընդունելով ելույթ ունեցողների գնահատականները՝ նիստը նախագահողը առաջարկեց Արցախի պետական համալսարանի 2020-2021 ուսումնական տարում կատարած աշխատանքը գնահատել *բավարար*:

2.Լսեցին՝

Արցախի պետական համալսարանի 2021 ֆինանսական տարվա արդյունքների մասին:

ԱրՊՀ հաշվապահական հաշվառման բաժնի պետ Ն. Գրիգորյանն ամփոփ ներկայացրեց 2021թ. նախահաշվի կատարողականը: /*Համապատասխան փաստաթուղթը կցվում է. առդիր 1 էջ:*

Ձեկուցումից հետո նիստը նախագահողը հայտարարեց հարցերի հերթագրում:

Հարցեր չգրանցվեցին :

Նիստի նախագահն առաջարկեց քվեարկել: Բաց քվեարկությամբ միաձայն *բավարար* գնահատվեց կատարված աշխատանքը:

2.Որոշեցին՝

ԱրՊՀ 2020թ. ֆինանսական տարվա արդյունքները գնահատել *բավարար*:

3.Լսեցին՝

Արցախի պետական համալսարանի 2022թ. եկամուտների և ծախսերի նախահաշվի նախագծի մասին.

Հաշվապահական հաշվառման բաժնի պետ Ն. Գրիգորյանը ներկայացրեց 2022թ. եկամուտների և ծախսերի նախահաշիվը: /*Համապատասխան փաստաթուղթը կցվում է. առդիր 1 էջ:*

Ձեկուցումից հետո նիստի նախագահը հայտարարեց հարցերի և առաջարկությունների հերթագրում:

Հարցեր չգրանցվեցին:

3.Որոշեցին՝

Հաստատել Արցախի պետական համալսարանի 2022թ. եկամուտների և ծախսերի նախահաշիվը:

4.Լսեցին՝

ԱրՊՀ կողմից ներկայացրած փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման ծրագրի և ժամանակացույցի մասին.

Խորհրդի նորընտիր նախագահի առաջարկով՝ հավատարմագրման գործընթացի աշխատանքների և ԱրՊՀ կողմից ներկայացրած փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման ծրագրի և ժամանակացույցի մասին ամփոփ տեղեկություն տրվեց:

Լ. Մարգարյանը հայտնեց, որ ԱրՊՀ կողմից ներկայացվել է բարելավման ծրագիր, որում հիմք են ընդունել փորձագիտական խմբի կողմից տրված խորհրդատվությունները, հստակորեն սահմանվել են ակնկալիքները, որոնք խորհրդատվության իրականացման կամ խնդրի լուծման ավարտին հաստատությունը նախատեսում է ունենալ: Ծրագրում նշվել են նաև միջանկյալ արդյունքների գնահատման ժամկետները՝ ինչ ժամկետներում է ուսումնական հաստատությունը պատրաստվում գնահատել/ստուգել տվյալ փուլի միջանկյալ արդյունքը, հաստատված են գնահատման պատասխանատու ստորաբաժանումները, գնահատման հաշվետվության ձևը՝ ինչ եղանակով է ուսումնական հաստատությունը պլանավորում իրականացրել միջանկյալ արդյունքի գնահատումը և որտեղ հասանելի կլինի գնահատման վերաբերյալ տեղեկատվությունը:

Հատկանշվեց, որ կարևոր ակնկալիք է սահմանվել լրամշակված ՌԾ, որը կհաշվառի Արցախի նոր իրականության առանձնահատկությունները և այդ իրականության առաջնահերթություններին կլինի աջակցող՝ ունենալով մշտադիտարկման գործուն համակարգ, որի միջանկյալ արդյունքը պիտի լինեն բուհի մարդկային նյութական ռեսուրսների և նոր իրողությունների հաշվառմամբ՝ լիազոր մարմնի հետ/խորհրդի ձևաչափով/ քննարկումների արդյունքում հստակեցված պետական առաջնահերթությունները և իրավական ձևակերպմամբ պետական պատվերը:

4.Որոշեցին՝

Ի գիտություն ընդունել տեղեկատվությունը:

*Նախագահ՝
Քարտուղար՝*

Ի. Հ. Իշխանյան
Լ. Գ. Մարգարյան

Առդիր 12 էջ:

Ք. Ստեփանակերտ
15.02.2022